ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 13 հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Անդամակցությամբ՝ Զ.Ղուկասյանի և Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Ռուբեն Թորոսյանը դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին կետի, 40.1-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ (վերջին) պարբերության և 63.2 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի և 146-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ կետի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականությունը:

2. Բացառությամբ ՀՀ ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի, վերոհիշյալ բոլոր դրույթների սահմանադրականությունը վիճարկելու հարցով Ռ. Թորոսյանը նախկինում դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (թիվ՝ 4-209, 4-243, 6-91, 6-87, 6-88, 6-94, 4-247 դիմումներ):

Սահմանադրական դատարանի դատական կազմերի՝ 23.09.2008թ., 30.09.2008թ., 19.11.2008թ., 02.12.2008թ., 23.12.2008թ., 23.12.2008թ. որոշումներով գործերի քննության ընդունումը համապատասխանաբար՝ 6-87, 6-88, 4-209, 6-91, 4-243 և 6-94 դիմումների հիման վրա, մերժվել է:

Թիվ 4-247 դիմումի հիման վրա գործն ընդունվել է քննության՝ սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմի՝ 24.12.2008թ. որոշմամբ: Ուստի խնդրո առարկա

դիմումի շրջանակներում դատական կազմը հարկ չի համարում կրկին անդրադառնալ այդ հարցին:

3. Վերոհիշյալ դիմումներից թիվ 4-209, 6-91, 6-88 և 6-87 անհատական դիմումները դիմողը ներկայացրել էր ՀՀ Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձի կարգավիճակով, իսկ թիվ 4-243 և 6-94 դիմումները՝ իր անունից:

Վստահված անձի կարգավիճակով ներկայացված թիվ 6-91 անհատական դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմի 02.12.2008թ. կայացրած որոշման մեջ նշվել է, որ «ներկայացված դիմումը ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով, որի համաձայն գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունվում, եթե դիմողը իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան: Քաղ. Ռ. Թորոսյանը հանդիսացել է ՀՀ Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձ: Նրա լիազորությունները դադարել են ընտրությունների ավարտից հետո: Քանի որ օրենքների վիճարկվող դրույթները անձամբ քաղ. Ռ. Թորոսյանի նկատմամբ չեն կիրառվել, հետևաբար նա ՍԴ դիմելու իրավունքի սուբյեկտ չէ»:

Թիվ 4-243 դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմի 23.12.2008թ. որոշմամբ մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 27 հոդվածի՝ թեկնածուի վստահված անձը կոչված է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում ներկայացնելու թեկնածուի շահերը: Նշված հայցադիմումների բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաեւ դրանց առնչությամբ կայացված դատական ակտերը վկայում են, որ վերոհիշյալ վարչական գործերի շրջանակներում վստահված անձ Ռ. Թորոսյանը հանդես է եկել ոչ թե իր՝ որպես քաղաքացու կամ վստահված անձի շահերի պաշտպանությամբ, այլ ՀՀ նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի շահերի, մասնավորապես, նրա ընտրվելու իրավունքի պաշտպանությամբ: Հետեւաբար, այդ վարչական գործերով կայացված դատական ակտերը վերաբերում են Լ. Տեր-Պետրոսյանի իրավունքներին ու շահերին եւ իրավական հետեւանքներ են առաջացնում նրա, եւ ոչ թե քաղ. Ռ. Թորոսյանի համար: Ուստի նշված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերի առնչությամբ կայացված դատական ակտերով կիրառված դրույթների սահմադրականությունը չի կարող վիճարկվել քաղ. Ռ. Թորոսյանի կողմից, քանի որ նշված դրույթները նրա նկատմամբ չեն կիրառվել»: Հիշյալ դիրքորոշման արդյունքում գործի քննությունը մերժվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

4. Սույն դիմումի շրջանակներում դիմողի կողմից չի ներկայացվել որևէ լրացուցիչ փաստաթուղթ կամ փաստարկ, որը կվկայեր դիմողի կարգավիճակի փոփոխության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքի բացակայության մասին:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն «Անհատական դիմումների քննությունը, ի լրումն սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաեւ այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է...»:

ՀՀ ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի մասով դիմումն ակնհայտ անհիմն է, դիմումի մեջ պահպանված չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21-րդ հոդվածի 2-րդ մասի է) կետի պահանջները, ըստ որի՝ դիմումում պետք է նշվեն վիճարկվող օրենքի դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումները:

6. Ինչ վերաբերում է դիմողի միջնորդությանը՝ իրեն ազատելու պետտուրքի վճարման պարտականությունից, ապա դատական կազմը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով դիմողի միջնորդությունը բավարարելու հիմքեր չկան:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղ. Ռ. Թորոսյանի դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՐՈՒԹՅՈՒՆ